

ՀՏԴ 809.198.1

Ոճագիտություն

**ԽԻՂԱ ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌՈՒՅԹԻ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԿԵՐՏՎԱԾ
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՀՈՎՀ. ՇԻՐԱԶ «ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐ»
ՊՈԵՄՈՒՄ**

Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ

Բանալի բառեր՝ բառույթ, բարոյագիտական նորմ, հնչյունաբանական, բառագիտական, ծևաբանական, ծանրանական, շարադրություն, ոճագիտական մակարդակներ, նախսդատություն, բառակապակցություն, կոչական:

Ключевые слова- Лексема, этический норм, фонотический, лексический, морфологический, синтаксический, стилистический уровень, предложение, словосочетание, обращение.

Keywords- allocution, lexeme, phonetic, lexical, morphological, syntactic, stylistic levels, sentence, word-group.

C. Minaсяn

**ЛИНГВИСТИЧЕСКАЯ ФУНКЦИЯ СЛОВА խիղճ (СОВЕСТЬ) И СОСТАВЛЕННЫХ ИЗ НЕГО СЛОВ В
ПОЭМЕ ОВАНЕСА ШИРАЗА «ТОНДРАКЕЦИНЕРЫ»**

В поэме Ов. Шираза «Тондракецинеры» слово совесть, как нравственное понятие, и однокоренные слова в армянском языке (жалеть, безсвестны) употреблены более ста раза (поэма составлена из 300 страниц). Они имеют фонетические, лексикологические, морфологические, синтаксические и стилистические особенности, позволяют отобразить всечеловеческие и общенациональные понятия, обусловленные верой, который был утерян в советском обществе. Нами отмечены разные стили, метафора, идиомы, гипербола, антитеза, градация, реприза.

S. Minasyan

**THE LINGUISTIC FUNCTION OF MORAL WORD խիղճ (CONSCIENCE) AND FORMED FROM IT IN
THE POEM OF HOVANNES SHIRAZ «TONDRAKETSINERY»**

The article deals with the moral word conscience and formed from it in Armenian some words (to pity, pitiless etc.) in the poem of Hovannes Shiraz «Tondraketsinery». They are used frequent: hundred times (the poem has 300 pages). The foregoing words have phonetic, lexical, morphological, syntactic, stylistic picularities. For example, make different styles, idioms, metaphor, hyperbole, antitesis, gradation, redublication, intonation.

Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիներ» երեք հարյուր էջանոց պատմաիրավանական պոեմում լիիղճ գործուն գրական-խոսակցական, բարոյագիտական բառույթը և նրանից սերված ու սակավ կիրառված՝ խղճալ, անխիղճ, խղճամնո, խղճուրացներ բառույթների հայրուր տասից ավելի գեղագիտական կիրառությունները հնչյունաբանական, բառագիտական, ծևաբանական, շարադրութական, ոճագիտական լեզվաբանական մակարդակներում համապատասխան ձենքով դրսուրում են մարդկային ու համամարդկային, ազգային ու համազգային վերաբերմունքներ՝ կապված հավատի հետ՝ կորուսկած խորհրդային կարգերում։ Գնդագիտական մակարդակում համեստորեն ճոխացված այդ բառույթները սակավ արտահայտչական-պատկերային միջոցներով են զարդարուն:

Ովհիղճ, Մարդկային ծովում՝ մարգարիտ կորած (290),
298. Ասոված տնենք, Մենք թեզ (Կաթողիկոս Ալյանունի) տնենք,
Մեր ասովածն է առանց միջնորդ, Առանց կամուք, անսառաջնորդ,
Վեր՝ երկնորդ, Ոչ թեն վանրում, Ասոված խիղճ է մարդու հօգում...
Մեր ասոված՝ առանց խայի, Տամարի մեջ է մեր խայի.
ՍՄԲԱՏ ԶԱՐԵԴԱՎԱՆՅԻ (Թռնդրակեցիները)

Լիիղճ գործուն գրական-խոսակցական, նաև բարոյագիտական բառույթը մեծանուն բանաստեղծ Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիներ» պոեմում գաղափարի արտահայտության կարևորագույն միջոցներից է։ Այն կիրառված է գեղագիտական միջոցների սահմաններում և հետապնդում է համամարդկային արժեքներ՝ բարոյագիտական բոլոր նորմներով։ Նախապես չի զգացվում այդ բառույթի գործուն կիրառությունը, բայց հետո աստիճանաբար իր հաճախականությամբ ուշադրություն է բնեում մարդկային ու համամարդկային, ազգային ու համազգային կարևոր, հոգնմոտ հավացություններ արձարձող շարադրութական կառույցներում արտահայտված վնիին, լավին, օրինակելիին և ընդդիմանում չարին, կենդիքին, շահադիտականին (երեք հարյուր էջանոց գործի չորս մասներում հարյուր տասից ավելի կիրառություն կա, որոնք աստիճանաբար հաճախակի են դատարկություն՝ 45, 51, 52, 55, 58, 63, 78, 84, 88, 90, 99, 104, 106, 111, 114, 122, 135, 138, 139, 141, 142, 143, 144, 146, 150, 152, 159, 163, 168, 169, 170, 176, 179, 180, 181, 184, 190, 210, 211, 212, 213, 218, 219, 220,

222, 223, 225, 226, 228, 243, 244, 250, 256, 255, 261, 262, 269, 271, 274, 275, 278, 280, 281, 283, 286, 287, 289, 290, 292, 296, 298, 306, 313, 314, 326. մասն առաջին՝ 83 էջ-17 անգամ, մասն երկրորդ՝ 109 էջ-40 անգամ, մասն երրորդ՝ 35 էջ-25 անգամ, մասն վերջին՝ 60 էջ-30 անգամ. նախնականը ու վերջնականը սակագ է են. առաջին՝ երեք էջ-0, երկրորդ՝ երկու էջ-1):

Հովի. Շիրազի «Թոնդրակալնեցիներ» պոեմը գրվել է նախորդ դարի հիմունականների ակզբին, բայց խորհրդային կարգերում չեր տպագրվել, փականքի տակ էր, որովհետև միջնադարյան հայկական համայնքին վերաբերող սխալների քննադատությունը հենց խորհրդային կարգերում թույլատրված սխալներն էին (մեծատաղանդ բանաստեղծը հեշտ հասկացել է խորհրդային կարգերի սխալներն ու համարձակվել դրանք արտահայտել հազարամյակ առաջ եղած և որոշ նվաճումների հասած թոնդրակյան լյանքին, իսկ գեղագիտական այդպիսի հնարանքները չին վրիպել ժամանակի քննադատների ուշադրությունից, ուստի տպագրությունն անթույլատրելի է մնացել): Այդ մեծարժեք գործը վերջապես լույս տեսավ խորհրդային կարգերի փլուզումից երկու տասնամյակ հետո՝ 2014 թ.՝ Սամվել Մուրադյանի ծավալուն գրականագիտական վերլուծությամբ: Նոյն թեմայով ու նոյն վերջագրով պոեմ գրել էր նաև Վահագն Դավթյանը՝ Հովի. Շիրազից մի քանի տարի հետո, որը տպագրվել է իսկույն՝ վայսունականի սկզբին, որովհետև արգելված հարցեր չեն արծարծվել, գրաքնչական դատաստան չի եղել: Խիզախող Հովի. Շիրազը նկարագրել է թոնդրակեցիների դեմ հարուցված բուն միջնադարյան դատաիրավաբանական աշխատանքների ընթացքը՝ արքա Օհան՝ Հովհաննես-Մմբատ Բագրատունու, Կաթողիկոս Հովսիկ Աղավնունու, սպարապետ Վահրամ Պահլավունու և ժամանակի մեծ մտածող, բազմակողմանի կրթություն ստացած, Բջնի աշխարհի իշխան Մագիստրոսի՝ Փիլիսոփոսի՝ Բջնեցու՝ Գրիգոր Պահլավունու մեղադրականներով ու գործավարությամբ (գլխավոր օրենսգենն ու իրավաբանն արքան էր, իսկ մեղադրողը՝ Բջնեցին՝ Գրիգոր Պահլավունին): Թոնդրակյան շարժման դեկավար, դրանց վերաբերող աշխատանքների ծրագիր-մագաղաթի հեղինակ Մմբատ Զարեհավանցին և դատվող մյուս ընկերները, որոնք բանահյուսական յոթնյակ էին կոչվում (դատավարության ժամանակ Թորակի պատահական սպանությունից, Հրանուշի դարձի գալուց հետո էլի նոյն յոթնյակն են կոչվել): Մեղադրյաներն պետական, իշխանական ու նրանց օգնող այլազգի գործերի կողմից պարտվել, շղթայվել ու բերվել են մայրաքաղաք Անի՝ բանադրելու համար: Թոնդրակեցիների համարձակ քննադատությունը հավատի շուրջը հավասարակշռությունից հանում էր մոլի հավատացյալ երիտասարդ սարկավագին, որը, կաթողիկոսի ձեռքից հափշտակելով ծանր խաչը, հարվածում է Մմբատ Զարեհավանցու առաջնակարգ աշակերտ՝ հետևող ուրբի Թորակի ճակատին: Վերջինս արյունվա անշնչանում է: Միամորիկ Թորակի մոր, սիրած կամարայի աղեկտոր սուզից և արևախավարումի շփոթից օգտվելով, ճողովրել է յոթնյակը, բայց բռնվել արաք իրուսակ զինվորների կողմից, որոնք հակաթոնդրակյան պայքարում արքայի՝ օտարազգի օգնականներից էին և անձամբ վրիժառու էին մահմեղական հակակրննական պայքար մղող Մմբատ Զարեհավանցու դեմ (հայերի նկատմամբ արաբական անօրինության հարցը Վահագն Դավթյանը խոր է ներկայացրել): Թոնդրակեցիների դեկավարական յոթնյակը Դվինի արքը դեկավար Աքլ-Բարբիի իրամանով կախաղան է հանվել իրապարակում, որովհետև դրան ճգտում էին թե՝ հայ, թե՝ արաք դեկավարները (բյուզանդականը վեր չի լուծվում, բայց Մմբատ Զարեհավանցու կապույտ աչքի խորհրդանշով հեղինակի կողմից սուր է ընդգծվել դարեր առաջ եղած թե՝ բյուզանդամենտությունը, թե՝ հազարամյակ հետո՝ ուստամենտությունը, որը և գիրքը չտպագրվելու ակնհայտ պատճառներից էր):

«Թոնդրակեցիներ» պոեմի թեման, ինչպես նշեցինք, հայ ժողովրդի միջնադարյան հասարակության ստորին կարգի ընչազորոկ մարդկանց՝ հացի կարոտ ապրելակերպի շուրջ բռնկված շարժման դեկավար դրոհիների դատավարությունն էր (հատկապես հավատի միջնորդների՝ շինականի հողերը զաված նեկնեցականների դեմ), որը քննարանվել է սոցիալական, տնտեսական կացութածեների, կին-տղամարդ հարաբերությունների և այլնի շուրջ եղած իրավիճակների բանադրման ընթացքում վերին ու ստորին խավերի ամենայն տիպականացված լուսաբանմամբ: Շիրազյան շրջանում՝ խորհրդային կարգերում, ազգության հնքնության խաթարման վտանգ նորից եղավ, մարդկային խոճի ոսնահարում զգացվեց: Մեծ մտածող Հովի. Շիրազը երկու էր՝ Մարդուկները ... մարդանան (141), Մարդել մարդուն (301), որն առ այսօր դեռ անքանը է, խիճ, որ երբեմն կորչում է (ՄԱՐԴ եղածները ճնշվել ու ճնշվում են դեռ անարդար շրջապատից՝ ազգային ու համազգային շրջանակներում): Կոմունիզմի զնորբը՝ թումանյանական սոկի բաղաքը, երազանք մնաց: XX դարի վերջին խոճուկ Հայաստանը ինքնուրույնություն ստացավ, հավատի իրավունքները համեմատաբար ազատություն ստացան, բայց հարուստ ու աղքատ դեռ կան, անհասկասարությունը դեռ սարսափելի է (ծույլեկները, դժվարություններից խորշողները կարգին մասսա են կազմել ու

Կազմում, օտարի շահադիտական վերաբերմունքն ակնհայտ է): Հայոց մեծ զավակ Հռվի. Շիրազը համամիտ չէր հավատի ժխտմանը՝ չարյաց փորբագույնը, մարդկության հատկանիշների պահպանության սովորական միջոցն էր համարում այն, հայության ինքնության նվազագույն պայմանը (Քրիստոն, Լենինը, կոմունան՝ հայկական ոչինչ չունեն), բայց գոնե Հայկի հայերենը՝ հայոց լնգուն, մեծագույն մտածողների շնորհիվ ու հայ աստված Մեսրոպ Մաշտոցի հայաշունչ հայերենի գորությամբ, մասամբ պահպանվել ու պահպանվում է): Բայց միևնույն է, առանց հավատի՝ խղճի մեծ գրավականի անհնար է: Ահա մեծ բանաստեղծի հավատամքը և լնդիանրացումը.

Մի աստվածայնի պիտի հավատաս, Մարդու վեհ բանի, որ աստվածանաս:

Մի խղճի ձայնի, որ զեթ մարդանաս... Թեկուզ չինի՝ պիտի հավատաս,

...Ո՛վ մարդ, մի բանի պիտի հավատաս՝ Որ աստված լինի, որ գեթ մարդ մնաս... (էջ 326)

Մեծանուն բանաստեղծ Հռվի. Շիրազի «Թոնդրակնեցիներ» պոեմի հավատամքի կենտրոն, համամարդկային ԽԻՆԾ բարոյագիտական ու սովորական համամարդկային բառություր, ինչպես նշել ենք, հարյուրտասից ավելի կիրառություն ունի՝ 113 (բառակազմական տարաբնույթ կառույցները սահմանափակ են՝ յոթից չեն անցնում): Խիղճ՝ արմատի կիրառությունը որոշ էջերում երկու, երեք անգամ է զործածված, չորս՝ հազվագյուտ. էջ 45, 63, 99, 114, 135, 139, 141, 146, 150, 220, 271, 274, 280, 306՝ 2 անգամ, 142, 176, 226, 256, 287, 289, 298՝ 3 անգամ, 180, 222, 243՝ 4 անգամ: Խիղճ-ը հայերենում չստուգաբանված բառույթներից է (հակում կա համարելու նախյան): Զայնդարձով տարբերակն է խիղճ-ը (2, էջ 944. 3, էջ 257, 366): Մեծանուն լեզվաբան Գ. Զահուկյանը ևս խիղճ-խեղճ տարբերակներ է ընդունել (9, էջ 388). Կոնկրետ՝ հնագույն՝ ուրարտական շրջանի ենտ է կապել): Արդի բազատրական բառարաններում (7, էջ 518. 1, էջ 579) պահպանված են խիղճ բառությունի նույն սահմանափակ իմաստները: Խիղճը՝ որպես բարոյագիտական նորմ, ունի հետևյալ բազատրությունը՝ 1. արարքների ներքին զիտակցումն ու զնահասումն է, իր վարրագծի բարոյագիտական պատուսխանատվության զգացում, 2. զութ, կարենցանքի զգացում, կրոնական համոզմունք: Հայկական սովորական հանրագիտարանի 5-րդ հատորում բարոյագիտական խիղճը բնույթագրվում է հետևյալ կերպ՝ Խիղճը բարոյագիտական կատեգորիա է, իրականացված բարոյագիտակցություն, որ բնորոշում է իր բարոյական սկզբունքները մշակելու, արարքները հսկելու և արժեքափորելու անհատի ունակությունը: Անհատի արարքների զնահասուականը դրսնորում է ոչ միայն որպես դրանց բանական զիտակցում, այլև ապրում՝ խտի խսյթ (էջ 52): Բուն բարոյագիտական բառարանում առավել ծավալուն է տրված՝ Խիղճը բարոյագիտական կատեգորիա է, որը բնութագրում է անհատի ընունակությունը իրագործելու բարոյական ինքնավերահսկումը, ինքնուրույն ձևակերպելու իր համար բարոյական պարտականությունները, պահանջելու իրենից դրանց կատարումը և տալու կատարված արարքների ինքնագնահասումը, անհատի բարոյական ինքնագիտակցության արտահայտություններից մեկը (շատ նվազագական լեզուներում ԽԻՆԾ բառը ստուգաբանորեն նշանակում է համատեղ զիտելիք, իսկ ուսներեն այն ծագում է զերծ՝ իմանալ բարից: ...Այն նաև զգացական վերապրումների ձև է:...Այսպիսով, Խիղճը անհատի կողմից հասարակության հանդեպ իր պարտքի և պատուսխանատվության սուբյեկտիվ զիտակցումն է (4, էջ 187):

Խիղճ բարոյագիտական ու համամարդկային բառությունը Հռվի. Շիրազի «Թոնդրակնեցիներ» պոեմում զործածության հաճախականությամբ սովորական ու զեղագիտական սահմաններում է՝ լեզվաբանական բոլոր ձևերով հնչողություն ստացած, բայց ամենազդեցիկը շարակյուսականն է, որովհետև այդ բարի բազմաշերտ ու տարաբնույթ կապակցությունների զեղագիտական ու իմաստաբանական արժույթների ծավալումը, համեմատաբար, ավելի հնչնու ու խոր ընկալելի է:

1. Խիղճ և նրանից կերտված բառույթների հնչունաբանական արժույթը՝ Խիղճ բառությունի հնչյունաբանական ոճական առանձնահատկություններ սահմանափակ են: Արտաբերական տեղերը ներքին շարժական ծննդուին տեղադրված լեզվի մասնարու հավասարարական են չորս հնչյունների համար (առաջնալեզվային ու հետնալեզվային): Արտաբերման եղանակից շփականությունը՝ բերանի թիզ բացվածքով, իշխող է, իսկ ձայնի և աղմուկի հարաբերությամբ՝ հավասար: Թույլ շշականությունը ձ հնչույթում ուշադրություն է հաղորդում բառին, բանի որ սովորական խոսքում այս բառի նման մեկ բառորդի (4-1=100-25 տոկոս) հարաբերություն չունի այլը, ուստի սովորական բարենհնչուույթան էլ հավելվում է հնչական սակավ շշականությունը: Բառույթը, ձևաբանական թեքման ենթարկվելիս կամ բառակազմական իրողությամբ սակավ փոխելիս, ի ձայնավորը հնչյունափոխվում է Ը գաղտնավանկի, իսկ հավելվող ձևույթներում գրվող ձայնավորները հայերենի հնչական համակարգին համապատասխան կառույցներ են և օրինաչափ: Օրինակ, Թորակ Թոնդրակնցու խոսքում՝ Խղճիս աչքերն ինչպես փակել (152): Խիղճ բառությունը ի ձայնավորի՝ շնչտի հետ կապված դիրքային

սովորական հնչյունափոխությունը ոճական արժեք չունի, բայց ստացական Ս հոդը կիրառվելիս սուլականությունը իսկույն ուշադրություն է զրավում:

«Անզի համար ԽԻՂՃ-ը հազարի կիրառվել՝ հարյուր տասից ավելի կիրառությունում՝ չորս անգամ (տողում առաջնադիր է, քանի որ ուշադրության կենտրոն լնզվական միավոր է):

...խիղճ...չիղջ: (51)

Մայր տաճարներն են զարթնեցնողը մեր քնած խղճի,

Նորա մեր ողյաց մարմնածներն են, -ինչպես թէ՝ «պնտր չի» (139):

-Այս ինչն ը կասեն, -ասացի, -անլիշ դժ:

Ասել է՝ կոյսս դառնամ պերճադի՞ճ:

-Ինչո՞ւ պերճադիճ, երբ պերճադիճը

Ծախում է նաև մարմնի հետ խիղճը (256):

2. *Խիղճ* բարոյիթի և նրանից կերտված բաղադրությունների բառագիտական արժեքները-*Խիղճ*-ը բառագիտական մակարդակում հնչնուի է հենց բարոյիթի իմաստաբանական հատկանիշով, որին սկզբում անդրադանք, իսկ իրեն կապակցվող բարերի հարևանությամբ ստեղծվում են նոյնիսկ աստվածացվող իրադրություններ, որտեղ հնչնուի շարահյուսական կառուցվածքից բլոտ ծավալուն վերլուծությունները: Հատկապնա առանձնանում են հոմանիշներով ստացվող աստիճանավորումները, կամ հականիշներով՝ հակադրույթները (ներքեմն հակադիրը ստանայացվողն է, դժոխայինը. 180): Ալսորժալուր բարեհնչունությամբ առանձնանում է դարավոր հավատի բարոզությամբ հազնեցած է խոսքը, որտեղ թոնդրակեցիներին վերագրվող բացասականը հակադրվում է խղճին: Օրինակ, ահա աստվածապաշտ կաթողիկոս Հովսիկ Աղավնունու ծոյն մտածողության արտահայտությունը թոնդրակեցիների դեմ՝ ...աղոթքներն են սրբողը սրտիդ, Միակ սրբողը՝ սատանայախաք, սև սարդոստայնիդ: *Տաճար* է, որ մեզ մաքրաթորում է՝ մանկացնելով, Վանելով դիրտը ամենաներող խիղճը ծնելով (141):

Խիղճ բարոյագիտական բառոյիթի արժեքումը ներքեմն ընդգծվում է աստվածաբանական հավատի բարենրով հազնեցած խոսքային կառույցներում, որը մեծարվում են հավատը, աստված, բայց ներքեմն (թռնդրակեցիների խոսքում զուապ փնտիկում է եկեղեցին), ինչպես՝ Աստված մոր խիղճն է, քնազդն է զույթի (168), ինձ աստված միայն իմ խիղճն է թվում: Միայն իմ խիղճն է կամուրջն ու ծամփան, Տաճարները չեն, բայց ընդդեմ կյանքի՝ Թե՛ շիավատաս աստծո զոյլության՝ Մարդը կուլ կերթա օրը բյուր մեղքի (289. ՍԶ), Թե՛ աստված խիղճ է՝ ճորտ ու տերն ի նշ է (181. Կունծիկ աբենա), Արքայի խղճի վրա եր հենցիում, - Սակայն աստծո չարքնդեմ խիղճն է հավիտյան քեմփում, Ահա թե՛ ինչու աստվածն իմաստուն դժոխքն էլ ստեղծեց (180. Հովսիկ Աղավնունի), Թե՛ աստված խիղճ է՝ վանքում էլ չկա (190. Հարքա Վրվեն), Ո՞վ դու ներ Վրվեն, թե՛ աստված չկա՝ Ո՞վ դրդեց խիղճդ, որ զանձ է ուկյա, Հարսությունդ ողջը բաժանեն հեզ արքատներին, Աստված՝ խիղճը կա, թե՛ որ յավ նայեն խղճիդ աշքերին (176. Հովսիկ Աղավնունի), Երբ հավատով են առնում ականջին Խղճի փոխարկվող անտեն արարչին (281. ՀԱ), Աստված խիղճ է մարդու հոգում ...Տիեզերքն է մեր խղճի հետ, ...Մեր աստվածը՝ առանց խաչի, Տաճարի մեջ է մեր խղճի (298) ևն:

Մեծանուն բանաստեղծ Հովիկ. Շիրազը, նոյնիսկ Հովսիկ Աղավնունու խոսքում կիրառելով աստվածաբանական մեծարման սովորական գեղագիտական փորձը, արևի խավարման պահին ամբողջացնում է կաթողիկոսի գրագիտության, խոսքի վարպետության, պահը նպատակասլաց գործադրելու հմտությունը՝ հասարակ ամբոխի նկատմամբ, նրանց դարձի բերելու ընդունակությունը (համաշխարհային փորձ). Եղիպատական տաճարների պատմությունից. ապատամբների կողմից տաճարի վրա հարձակման ժամանակ դուրս ջարդելիս՝ արևի խավարում և տանիքից քուրմի խոսքը): Ահա այդպիսի պահ էլ գործածում է Հովհաննես Շիրազը՝ տիպականացնելով կաթողիկոսին: Այստեղ նպատակային է հնչում խիղճ բառը:

Քանզի ձեզ փրկեց աջն իմ աստծո՝

Ձեր հոգում մերած հավատը նորենց,

Այս խավարումով ձեզ լուսավորենց,

Ձեզ դարձի բերեց սրբազն ահով,

Ձեր խիղճը փորձեց՝ արևի մահով,-

Որ ծունկի եկաք իմ խաչի առաջ (306. Հովսիկ Աղավնունի):

Ճիշտ է, մեծ հեղինակը հակադրում է նաև Սմբատ Զարեհավանցու ճշմարիտ խոսքը, բայց միևնույն է, ամբոխը հարձակվում է նրա վրա, զրկում կապույտ աշքից՝ հունամետությունից, բյուզանդակամետությունից (հեղինակի գեղագիտական հայամետությունը՝ սև աշքը, մնում է, որը շիրազյան մտքի գեղագիտական նվաճումներից է, իսկ կապույտ աշքը հանվում է, այսինքն՝ հունամետությունը, բյուզանդակամետությունը, ուստամբամետությունը, իբր վանվում են, բայց արքան,

պատերազմից խուսափելու համար, վերջում Անին հանձնում է հունաբյուզանդականներին՝ ինքնասպանություն գործելով. այս լուծումը «Անի» պոեմում է):

Մարդուկներն աստ են մարդանում լոյսով աստծու օձալ,

Առանց մեղքնի խստովանության՝ ի՞նչ հավատագյալ:

Հիւուսի խիղճն է խնկաբուրպառում մեջն այս վանքերի (141):

Ոգեծնսնիք բոլոր խնկաբույր

Խղճի մերան են ձգում ոզյաց մեջ,

Խիղճը՝ իբրև անտես աստծո համբույր,

Մանուշակում են փշոտ սիրտը, ո՞վ խնդ (280) ևայլն:

Առանց գրաբարատիպ բառների պաճուծանքների՝ բարձր ոճ է նաև սպարապետ Վահրամ Պահլավինու խոսքը, որը *Խիդժ* բառույթն իր աշխատանքի ոճի՝ զինվորական նետ-ին է կցնել, ուղղմականն ընդգծելով և այլաբերական իմաստով դիպուկ, հակիրճ բնութագրություն տվել՝ *Խիդժ* նետը խայլենի (296) *Խիդժը տանջել* (շրջասույթ):

Հիդհ զործուն բարոյագիտական բառույթը հարյուրտասից ավելի օրինակների սահմաններում հովի. Շիրազի կողմից կիրառված է հիմնականում սովորական ոճում: Հատկապես իմաստուն խոսքի արժեք ստացած խոսակցական կառույցները բավականին կշիռ ունեն՝ խոճի ձի (142)` միտր՝ Բայր ինձ երկինք չի տանում խոճիս ձին (Թռնդրակյան Կյուրենի խոսք), միշտ խոճի միջով ճամփորդել՝ խոճճ ծնել (142), մայրական խիդճ (146)` բնազդ, խոճի զերի (243), խիդճը գողանալ (244), խոճի կենոր (287) ևն: Ժողովրդական մտածողությամբ իբր Սմբատ Զարեհավանցու ստեղծածը ոչ միայն կործանվեց, այլ նաև՝ համայնքներդ խիդճը կերան (314): Ընդհանրապես, սովորական, ժողովրդական պարզ ոճին միշտ ձգտել է հովի. Շիրազը: Այս պենմում էլ արքայի խոսքով իմաստաներ Փիլիսոփոսից՝ Բջնեցուց է պարզ ոճ պահանջում հեղինակը, որովհետև բանադրանքը հասարակ աշխատավորների հետ է ընթանում, դեկավարը՝ Սմբատ Զարեհավանցին, միշտակ կրթական մակարդակ ուներ, իշխան, եկանգական անձիր նրանց մեջ սակավ էին:

Հակաթոնդրավայսան պայքարն արքայի խոսրում անգամ արդարացվում է *հայոց ու մեր խիոց* կատուցներով (ազգայինը հակադրվում է համազգայինին՝ Թե՛ մենք հենվենք հայոց խոճին, Թե՛ մեր խոճի ձայնով խոսենք, Ազգի վիշտը թե չկխենք, Կաղծեն վանքն էլ մեր ոգու (271): Այսինքն՝ համայնավարությունը, որը համաշխարհային նպատակ ուներ իբր, ի շահ ուժեն ազգի է, թույլը կոռութի (Քովի. Շիրազը, քանի որ ապրում էր համայնավարական խորհրդային կարգերում, հեշտ է հասկացնլ այդ սխալը, օտար ուժեղների կողմից հասարակ ժողովրդին կառավարականի՝ իշխողականի՝ հարուստների դեմ հանելը, և դա վերարտադրել է հազար տարի առաջվա արքայի խոսրով ու գույց տվել դատավարության ժամանակ Սմբատ Զարնիավանցու համոզվելը իր կատարած սխալի նկատմամբ. հայրենիքին հասցրած վնասն այնքան ճնշող է, որ գանկացած հայրենասեր գիտակից մարդ զավով է ընդունում դա):

Հինգ գոյականից բառակազմական երկրորդական ածականակերտ ան- նախածանցով կնքութել է անհինգ բառույթը՝ երկու անգամ կիրառված (150, 256) և բայակերտ –այ վերջածանցով բայ՝ խղճայ (45, 114)՝ չորս անգամ կիրառված, իսկ բարդությունը երկուսն է (խղճամնու, 228, խղճուրապ/ներ, 212):

Խիդժ բաղադրիչով բավականին շրջատվթներ ու դարձվածներ կան (համարյա հարյուրտասից ավելի կիառությունների մեկ երրորդը), որոնք հիմնականում գոյական, բայ և ածական են (խղճի

աչք/նր դարձված-շրջասույթը կիրառվել է հինգ անգամ՝ 144, 152, 159, 176, 219): Ահա այդ շաբթը՝ գոյական. խիղճն արքայի, շրջ՝ հանուն հայրենիքի՝ արքայի կշռադատողություն (274), խղճի ածու, շրջ՝ մարդ (286), խղճի աչք/նր, շրջ՝ խղճմտանք, ինքնաքննադատություն (144, 152, 159, 176՝ լավ նայեն խղճի աշքերին, 219), խղճի ձեռքից, դարձ.՝ խղճմտանք/ից (225), խղճի խորան, շրջ՝ շատ խղճ ունեցող (88), խղճի ձի, շրջ՝ միտք (142), խղճի ձոր, դարձ.՝ խղճմտանք (150), խղճի մնոք, շրջ՝ անխղճություն (275), խղճի մնորան, շրջ., դարձ.՝ խղճ գործադրություն (280), բայց խղճը բախնել, դարձ.՝ բանակցել (90՝ զնա հայ հողն ափշոփողի Խիղճը բախնել), խղճը գողանալ, դարձ.՝ կաշառել (244), խղճը խոսել, շրջ՝ մարդանալ (222, 278), խղճը մտքի հետ կամքել, շրջ.՝ խղճմտանքով գործել (243), խղճը սրտի մեջ կրել, շրջ.՝ խղճով լինել (152), խղճը վանել, շրջ.՝ անխղճանալ (58), խղճը վորձել, շրջ.՝ ստուգել (309), խղճն ուտել, շրջ.՝ անխղճանալ (314, խղճը կերան), խղճին պատանք կարել, շրջ., դարձ.՝ անխղճանալ (306), ածական խղճի կշեռ, շրջ.՝ աչառու (287), խղճին հլու, շրջ.՝ խղճմտանքով (213), խղճի ստերօ, շրջ.՝ անխղճ (210), խղճի գերի, շրջ.՝ խղճմտանքով (243) ևն:

Դարձվածները հիմնականում ժողովրդական ծագում ունեն, իսկ շրջասույթները՝ հեղինակային, որոնք, ցավոք, դեռ ամբողջական տարբերակում ու լայն ճանաչում չունեն հայ լեզվաբանությունում: Հովհ. Շիրազի Քնար Հայաստանի նորահատորից դարձվածների օրինակներ կան հայագիտական բառարանում, բայց շիրազյան գործերի հետազա հրատարակություններից չկա (այդ բնագավառում խոր աշխատանք կատարած հարգարժան Պետրոս Բենիքյանը սակավ է օրինակներ տվել, որովհետև վերջին հրատարակությունները չի օգտագործել). շատ դարձվածներ Քնար Հայաստանի նորահատորից գիտականորեն խոր բննարկել է Վ. Ալեքսանյանը, ցավոք, որն անտիպ է): Մեծանուն ստեղծագործող Հովհ. Շիրազի «Թոնդրակենցիները» պոեմում գործածված դարձվածներն ու շրջասույթները, որոնք պարունակում են խղճ բառույթը, թեև առավել շատ բարձրաստիճան պաշտոնավորների (արքա, կաթողիկոս) խորում են կիրառված, բայց հիմնականում, բնական, ժողովրդական բնույթ ունեն:

3. Խղճ և նրանից կերտված բառույթների ձևաբանական կիրառությունները:

ԳՈՅՑԱԿԱՆ-Խղճ արմատական բառույթը գոյական է, որն այդպես էլ հիմնականում կիրառված է Հովհ. Շիրազի «Թոնդրակենցիները» պոեմում (հայրուրի հասնող): Խղճ գոյականից բառակազմական երկրորդական ածականակերտ ան- նախածանցով կերտված է անխղճ բառույթը՝ երկու անգամ կիրառված (150, 256), բայսակերտ առ վմբածանցով՝ բայց խղճալ (45, 114՝ երեք դիմավոք, մեկ անդեմ ձևով կիրառված): Երկու բարդույթներն ածականներ են գոյականաբար կիրառված (ո՞վ խղճամետ, 228 և ո՞վ խղճուրացներ, 212):

Խղճ գոյականն առավել շատ գործածվում է նեզակի թվի ուրիական, սեռական, տրական, հայցական հոլովներով, մյուս ձևերը սակավ են (ներգոյական հոլովի և հոգնակի թվի կիրառություններ չկան): Ահա հոլովածների մի բանի օրինակներ:

Ուղղ. - ...քանզի խղճդ է խոսում (222), Ուր որ խղճն է քուն (287), Աստված խղճ է մարդու հոգում (298), խղճը խոցվեց (313):

Սեռ. - Խղճի խորան (88), ...խղճիս ձին (142), Աստված...տաճարի մեջ է մեր խղճի (298):

Տր. - ...քո խղճին վայել (111), ...հենվենք հայոց խղճին (271), ...իմ խղճին հլու (213):

Հայց. - Պիտի գողանամ ես խղճը նրա (244), ...այս դաշույնները խղճն մետքը (274):

Բազ. - ...թոնդրակուիին խղճից է գործում (256):

Գործ.- Որ դարձի զա՝ խղճով մաքուր (63), ...խղճով բանան Այս մթին կիրճը բանադրության (122), (արքան) խորհում էր խղճով ապաշավամբի (գործաք, բնագրում ապաշավամք է գրված. 218):

Ներգոյ. - -

Խղճ գոյականը լսնդրու առարկա գրքում մեծ մասամբ բառահարաբերական երկրորդական ձևույթների (վերջավորությունների) հետ է կիրառվել (ներառյալ՝ զրո), իսկ քերականական ստորադասական հարաբերություն ցոյց տվող խոսքի մասների՝ կապերի և բառահարաբերական երկրորդական ձևույթների համատեղությամբ՝ սակավ: Օրինակ՝ ընդդիմության ու հակառակության կապի հետ՝ Երբ խղճիդ ընդդեմ ճիշտը կխոսի (84), տարածականի՝ Միշտ խղճի միջով զմահ ճամփորդեն (142), հանգման՝ Արքայի խղճի վրա երբ հենվում (180), վերաբերության՝ Ի՞նչ հայեր...վայեր են խղճի հանդիման (222), միասնության՝ Երբ մի մատուռն էլ կամքում է միշտ Մարդուն խղճի հետ (139), Աստված տիեզերքն է մեր խղճի հետ (298):

ԱԾԱԿԱՆ- Խղճ գոյականից ԱՆ- ժխտական նախածանցով կերտված անխղճ ածականը վերագրվում է Սմբատ Զարեհավանցուն՝ (150), մի տող հետո կրկնաբերվելով խղճ արմատը՝ խղճի ձորեր դարձվածով խտացնելով այդ բառույթի իմաստային արժույթը և Հրանուշի խորում՝ ուղղված կունծիկին՝ իրեն թոնդրակցիների շարքը հրապուրելիս, քրիստոնեական բարոյական գծերից հեռացնելիս (256):

Ածական երկու բարդություններ գոյականաբար կիրառված եզակի ու հոգնակի ձևերով կոչականներ են արքայի ու վեհի խոսքում բացասական իմաստով՝ ուղղված թոնդրակեցիներին և արտահայտելով հոգու զատկը (ո՞վ խճամբոր, 228 և ո՞վ խճուրազներ, 212):

ԲԱՅ- Բառակազմական –այ վերջածանցով բայ է կերտվել խիդա գոյականից՝ խղճալ (45՝ խղճա (կրկնված), 114՝ խղճ/ա-ց, խղճ/ալ-ով մանկանց): Խիդա գոյականից սերված ընթացական վիճակը կարծես առավել հնչեղ է արտահայտում բարյական նորմը: Ասորոշ դերբայի արմատական հիմքից կամ առաջին՝ անկատարի հիմքից կիրառված են ըղձական ապառնի բայական երկու թեքված ձևերը՝ խղճ-ա պարզ կառույցը, երկրորդ նշույթավոր ցոյական հիմքից՝ սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևի եզակի թվի երրորդ դեմքի պարզ ձևը՝ խղճ/ա-ց, իսկ երրորդ հիմքից՝ գործիական հոլովաձև՝ խղճ/ալ-ով: Առաջին հիմքով՝ խղճ-ա, աղաչական ձևով ըղձական ապառնի բայաձևերն են իրար մոտ տարբեր նախադասություններում՝ արքայից աղերսներով թոնդրակյան շարժման դեկավարների ազատությունը, երրորդ դիմավոր ու չորրորդ անդեմ կառույցները՝ ցոյական և երրորդ հիմքերով, բնութագրում են Վահրամ Պահլավոնու ու կաթողիկոս Հոսփի Աղավնունու խղճահարական վերաբերմունքները Սմբատ Զարեհավանցուց ծնված տարբեր գոյնի աշքերով (երեք տարբեր մայրերի) մանկանց նկատմամբ:

-Արքա, *Խոհանորդության*, Նա չար մտքով չառաջնորդեց...-Ազնիվ արքա՝, *Խոհանորդության* մեջ էլ...⁽⁴⁵⁾: Բայց Պահլավունին, թվաց, թե *Խոհանորդության* վեհիք՝ *Խոհանորդության* (114):

4. *Խիդա* և նրանից կերտված բառույթների շարահյուսական արժեքները-Մեծատականդ մտածող հովի. Շիրազի «Թոնդրակնեցիները» պոեմում *Խիդա* բառույթի և նրանից սերվածները այլնի հետ իմաստաբանական բազմազանություններով շարահյուսական սահմանափակ հարաբերություններում են խմբվում՝ պահպաննելով կեցույթյան համար բարդագիտական կարևոր սահմանները: *Խիդա* և նրանից կերտված սակավ բառույթների շարահյուսական մակարդակում կապակցվում են ստորոգումային, գերադաս ու ստորադաս անդամների դերում, ուր իշխում են Ենթակա-ստորոգումային, հատկացական և խնդրային կիրառությունները (կոչականը սահմանափակ է): Դա բխում է մեր լեզվի ու շիրազյան մտածողության օրինաչփությունից, *Խիդա* բարի նկատմամբ մարդկային դարավոր աստվածակալս վերաբերմունքից:

Խիղճ և նրանից սերված բառույթների ենթակա-ստորոգյալ հարաբերությունները պոեմում, ինչպես նշել ենք, իշխող ու ծավալուն են: Այն պարզ նախադասության՝ ասույթի (Գ. Զահոնիկյան), կարևորագույն գերադաս անդամ կենտրոն է դաշնում: Ահա դրանք՝ ենթակա (շատ է). Տե՛ր իմ, խի՛ դդդ է իմ մեղքի վկան (52. Սմբատ Զարեհավանցին՝ արքային), Մահ է ձեր լիիդն էլ (Տե՛ր Աղավնունին՝ թռնդրակեցիներին. 55), Թե՛ մաքրովի լիիդդ է սև ամպ (99), Ո՞ր է հայ լիիդը (106), Երբ լիիդը չկա (170), Խիղճ կա (176), լիիդն է տանջում (179):

Բաղադրյալ՝ անվանաբայական ստորոգյալի վերադիր՝ Մնի հույսն արքայի խիղճն է յոթնասիրտ (78), Թե աստված խիղճ է (149), Թե աստված խիղճ է՝ Ճորտ ու տերն ի՞նչ է (181. Կունծիկ արելա), մայրական կուրծք է խիղճդ ինձ թվում (243՝ վեհը՝ արք-ն), Արքայի խիղճն էր ճեր սպեղանին (274), հավատքը խիղճն է (283): Պարզ ստորոգյալ՝ խոճա (45), խոճազ... (114):

Ստորագասական հարաբերություն՝ զերադար կամ ստորադար խիղճ բաղադրիչն է (շատ է՝ արքայի խիղճն է յոթնասիրտ (78), խաթարված խիղճը (99), մոր խիղճն է (168), խոսնց խիղճն մունչ (250, Հրանուշ), ալս ռաշունները խիղճն մնողորին (274), ձեռ խոցին նետոր (296) ևն:

(250. լրացնչ), այս լրացնչութեանը լուրդա առցուի (277), սար լաւը մասը (278) ա։ Խիդած բառույթի ստորադասական հարաբերությունները տարաբնույթ են։ Հաճախակին հատկացականն է։ Որոշչային հարաբերություն չկա, իսկ բազահայտչայինք՝ սակավ։ Հատկացական-Ծարակիուական այս հարաբերությունը գործածության հաճախականությամբ իշխողն է (հասնում է երկու տասնյակի)։ Խիդած գործում է կարծես աստվածային զորությամբ։ Նրան վերագրվողը, նրա հատկացական հատկանիշները բազմազան են։ Հատկացական հարաբերությունը նույնիսկ հաճախակի նորից զերադաս կամ ստորադաս հատկացուցիչ է ընդունում՝ զորացնելով հատկացման, ծագման, սերման, վերաբերության, պատկաննելության նրբերանգային կենսունակ հաճախականությունը։ Օրինակ՝ ահա Աստծո խղճի մազնիս (141) արտահայտությունը, որը ծեսեր իմաստով շոաստություն է, բայց մի կարստայ ամենակարոր վերագրված հավասին։

Բացահայտչային (սակավ է, միայն աստծուն է բացահայտում)` Աստված՝ Խիղճը, կա՝ (176), Մի պարվածանի ահիսի հպվապաս՝ Մի խոճի ձանի, որ զեթ մարրանապ (326):

Խամազայիր պրադր ուստանաւ Ծրբակը սահմ., որ վայ սալիքանաւ (320):
Խնդրային (քազմազան են, իշխողն ուղիղ խնդիրն է)` սեղի ուղիղ խնդիր՝ խիդճ են ծնում (142), Ո՞վ դրդեց խիդճ (176), Կառափնարանը ։ Այս խիդճը փնտրեմ... (222), խիդճ չունի՞ն (292), կողմնակի ուղիղ խնդիր-ի զիվ կարենանք մնենդիիներով սոցա մշուշել, Զարթնեցնելով քնած խիդճն այնպես, որ իրավ զորան (138):

Անուղղակի՝ բնույթյան խնդիրը, 1. հանգում Երբ մի մատուցն էլ կամրջում է միշտ Մարդուն խղճի հետ (139), Այս է աղանդ՝ իմ խղճին հլու (զեղչված է օժանդակ բայց՝ հլու է. 213), վայեր են խղճի հանդիման (222), մնաս խղճի գերին (243):

Խիդճ և նրանից սերված լուծար բառույթները գործողության հետ հանգամանքային լրացական հարաբերություն սակավ ունեն: Հիմունքի պարագա՞ թռնդրակուիին խղճից է գործում (256), ձևի պարագա՞ Հառաջեց վեհը խղճալով մանկանց (114):

Համադասական հարաբերությամբ խիդճ բառույթի կապակացությունը (այլի հետ) հազվագյուտ է. պարզ նախադասություն (համազոր անդամ՝ ուղիղ խնդիրը՝ Որ ո՞չ աստված ունեք, ո՞չ խիդճ (51), ենթակա (ստորոգայլը զեղչված է՝ Որտեղ խիդճ ու սեր՝ այնտեղ աստված կա (287), բարդ նախադասություն, վերադիր (օժանդակ բայց զեղչված է՝ կամարան... ի՞նչ կին, ի՞նչ իշխանուիի, համակ խիդճ ու գութ, թող աստված պահի (211. ԱԶ), Աստված մոր խիդճն է, բնագրն է գութի (168):

Խիդճ և նրանից սերվածները՝ կրչական (Արտաշես Պապոյանը և Խաչիկ Բադիկյանը կոչականը նախադասության անդամ են համարում հետևելով Մ. Աքենյանին (8, 183-194))՝ Որ հողն էլ խիդճ, ո՞վ խղճութացներ (212), ո՞վ խղճամեն (228. Արքան՝ թռնդրակցիներին), որտեղ նա, ո՞վ խիդճ, ո՞վ դու ամեն ինչ (290), Այս ինչե՞ր կասես... անլսի՝ դժ (256):

5. **Խիդճ** և նրանից սերված բառույթների արտահայտչական-պատկերային արժույթները: Հռվի. Շիրազի «Թռնդրակնեցիները» պոեմում խիդճ բառույթը և նրանից սերվածների արտահայտչական-պատկերային արժույթները զուտ զեղագիտական ճղու ձևերով քիչ են ոճարանական համակարգ կազմում: Իշխող են այլաբերության, մակրիբային և չափազանցության չափավոր կառույցների հարևանությամբ կիրառվածները: Խիդճ բառույթը և նրանից սերվածները նաև համարդիկներ այլաբերական որոշ բառերի, վեր են ածվում շրջատույթի կամ դարձվածի, որն ունի ծավալուն կիրառություն (դրա մասին խոսվել է): Մակրիրի դերով ոչ թե խիդճ բառն է հանդես գալիս, այլ նրա լրացումը ու, քանի որ սերտ են բովանդակությամբ և իմաստային ընկալմաք, ուստի զերադաս խիդճը մերկում է պատկերային նպատակին ու հնչել է լինում: Քանի որ կառույցները զեղագիտական չափածոյում են, ուստի մակրիների նախադաս ու հետադաս շարակարգվածությունը խիդճ զերադասի նկատմամբ, ըստ տաղաչափական պահանջի կիրառության, համարյա հավասար է: Խոդճի նկատմամբ զերադաս կամ ստորադաս մակրիները տարբեր խոսքի մասերով են (իշխողն ածականն է՝ ուղղակի ու փոխաբերական իմաստներով կիրառված, որոնք խորացնում են խիդճ գոյականի իմաստաբանական կարևորությունը մարդկային կյանքում: Հատկապես առանձնանում է հայ խոդճը (106) կառույցը, որով արքայի կողմից շնչառվում է անմիշաբանության ցավը Գրիգոր Պահլավոնու՝ Մագիստրոսի և Սմբատ Զարեհավանցու միջև (դա մնա բանաստեղծի և հանուր հայության տառապանքն է նաև):

Շրջատույթների, դարձվածների այլաբերություններում խիդճը, երեսն պահպանելով ուղղակի իմաստը, հարատացվում է պատկերային այլ կառույցներով, որոնք օժանդակում են մասնակի առանձնավորման: Օրինակ՝ ահա խոդճի աչք (159) դարձված-շրջատույթը, որը, գործածվելով վեհի խոսքում, ձեռք է բերում ուշադրություն իմաստը: Գեղագիտական սաստակացում է հաղորդվում կարևորվող մտքին, այն է՝ թռնդրակնեցիներին մեղադրում են ի շահ հայրենիքի չանհանգստանալու համար:

Չափազանցություն- Խիդճ բառույթի, բարոյագիտական հասկացության վեհ իմաստների վերաբերյալ կուտակվում են ահազնանալու, շատանալու ցանկություններ, լավին տեղ տալու, ուսուցանելու երազանքներ, ուստի արքշիռ են մտային զեղումները, եղածների նկատմամբ սրտաբացության վերաբերմունքը: Օրինակ՝ Մարդասպանի մեջ խիդճ են ծնում..., Մշշտ խոդճի միջով ցմահ ճամփորդեն..., ինձ երկինք չի տանել խոդճի ծին (142), համայնքներդ խիդճը կերան (314, ժողովուրդն իբր ատում է Սմբատ Զարեհավանցու):

Հակադրություն (սակավ)՝ խիդճ բառին հակադիր հասկացությունների համադրությամբ, արտահայտիչ է դառնում համամարդկային այդ երազանքը: Օրինակ, ահա արքայի խոսքում՝ ուղղված Սմբատ Զարեհավանցուն, կիրառվում է խոդճին իրոնիայով հավասարեցվող զրո հասկացությունը՝ անխելքությունը՝ չեղյալ խելք, ներքուստ հակադրվող իմաստով. զեղագիտական կառույցը պարադրսալ է դառնում՝ ինչպես ու է խիդճ կամ չեղյալ խելք անմիտ բարբառում (143):

Աստիճանավորում (սակավ)՝ խիդճ բառին հակադիր հասկացությունների համադրությամբ ու խիդճ բառի մեկ անգամվա զործածությամբ, որոնք ծավալվելով առավել ազդեցիկ են դարձնում վեհը, զեղեցիկը կամ թվարկում և մոտավոր հավասարություն ստեղծում, ուր զարգվում է խիդճ բառի թեկուց աննշան առավելությունը. Աստված մոր խիդճն է, բնագրն է գութի (168):

Կրկնաբերությունները թիշ են (հնչյունականի սահմաններում. Խ-դ, ճ-չ՝ դ ստացականով)՝ Ինչպե՞ս և լիիդդ կամ չեղյալ խնլքդ անմիտ բարբառում (143): Հանգի համար՝ Մայր տաճարներն են զարթնեցնողը մեր քնած խղճի, Նորա մեր ողյաց մարմնածենրն են,- ինչպե՞ս ո թե՝ պետք չի (139): Խղճալ բայի կրկնություն դիմավոր և անդնմ բայածենրով՝ Պահլավունին, թվաց, թե Խղճաց... Հառաչն վեհը՝ Խղճալով մանկանց (114), բայի դիմավոր բառածեն է մի անգամ կրկնվում՝ Արքա-, խղճա- Զարեհավանցուն, -Ազնի վ արքա-, խղճա- մեզ էլ... (45): Խղդաց գոյականի կրկնությունը միևնույն տողում, լիասույթում (Գ. Զահուկյան) երկու անգամ է (բարդ ստորադասական նախադասության՝ լիասույթի գնրադաս ու ստորադաս ատույթներում է կիրառված, ուր հնչնդանում է Խղդաց բառութի բովանդակ էռլայունը, հատկապես աստվածային ընդհանուրի ու անհատական զոյի հակադրությունում. համադասականի միավորականում ևս մտքին խտացվածություն է հաղորդվում՝ Աստված՝ Խղդաց՝ կա, թե որ լավ նայեն Խղճիդ աշքնրին (176), ...իմ Խղդաց խոսնց, Խղդան էլ խնլք ունի (220. Արքան՝ կաթողիկոսին):

Հնչերանգ-Բնական է, Ռովի. Շիրազի «Թոնդրակնեցիները» պլոնմում կիրառված, խղճի հետ կապվող, հոգարտահայտչական հարստությունները բխում են հայ ժողովրդի հոգում կուտակված դարավոր զավից, որոնք շիրազյան զեղագիտական մտահացմամբ հնչերանգում նոյն շարշն են կրում՝ հավելվելով արքայական, եկեղեցական, ուժի (բանակ), քաղաքականության, զիտության, իրավաբանական իրավունքների պահանջկուտությամբ, սպառնալիքով, զթության հայցման և այլնի հնչերանգներով: Թեև կետադրական նշաններով երեք մեզ են պարփակվում, բայց նրբերանգները բազմազան են: Խշում է շեշտ-դիմումը: Հարցում պարունակող հնչերանգ՝ ... և խի՞նդդ է իմ մենքի վկան (ՍԶ-ին՝ արքային, 52), շեշտ՝ հոգմկան ապրումներով շաղախված՝ Խրախուսանք՝ Վեցըն և, որ այսպես խղդաց զարթնեցավ (262. Աղավնունի վեհը՝ դարձի նկած Հրանուշին), ցաւկ-դիմում՝ Այս ինչն ը կասեն... անխի դճ (256՝ Հրանուշը կունծիկին), Որտե՞ն են, ո՞վ խինդ, Ո՞վ դու ամեն ինչ, Մարդկային ծովում՝ մարզարիտ կորած (290):

Օգտագործված գրականություն

1. Աղայան Է. , Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976 թ., 1616 էջ:
2. Ավետիքնան Գ., Սիրմելեսան Խ., Արքերենան Մ., Նոր բառփիրք հայկակեան լեզուի (1836, ի Վենետիկ, վերաբատարակված), Ե., 1979 թ., 1142 էջ:
3. Աճայշան Հր. , Հայերեն արմատական բառարան, հ. II, Ե., 1973 թ. (վերահր.), 688 էջ:
4. Բարոյագիտական բառարան, Ե., 1983 թ., 456 էջ (թարգմանված ռուս. V հր.):
5. Դավթյան Վ., Երկեր, հ. Երկրորդ, Ե., 1985 թ., 422 էջ (Թոնդրակնեցիներ՝ 89-188):
6. Եզնիկյան Լ. , Ոճագիտություն (հայոց լեզվի, ուսմնկն ձեռնարկ), ԵՊՀ հրտրկչ., Ե., 2003 թ., 376 էջ:
7. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. II, Ե., 1972 թ., 720 էջ:
8. Պապյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ հրտրկչ., Ե., 2003, 462 էջ:
9. Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Ե., 1987 թ., 748 էջ:

ԲՆԱԳԻԸ

Հովհաննես Շիրազ, Թոնդրակնեցիները, Ե., 2014, 328 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Սիլվա Մինայան-բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Արքահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն, 097- 26-75-37, E-mail: silvaminasyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորեն խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը: